<<ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ-ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

<<Սառնաղբյուրի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը մշակելիս հիմք է ընդունվում կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերը և նորմատիվները, առողջապահության ռազմավարությունը:

<<Սառնաղբյուրի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ը սպասարկում է Սառնաղբյուր համայնքի բնակչությանը՝ թվով 3451 մարդ, որից

- 0-18 տարեկան երեխաներ՝ 873
- 18տ. բարձր ազգաբնակչություն՝ 2578

Կազմակերպության զարգացման հիմնական ուղղություններ են

1. Կառավարման համակարգի կատարելագործումը,որի համար անհրաժեշտ է բուժաշխատողներին շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերում ակտիվորեն ընդգրկելով՝ ապահովել 2021թ.-ին անհրաժեշտ ՇՄԶ կրեդիտներով՝ նրանց աշխատանքային գործունեությունը շարունակելու իրավունք ստանալու նպատակով: Ապահովել վարչական աշխատողների մասնագիտական վերապատրաստումներին մասնակցությունը;

<<Սառնաղբյուրի առողջության կենտրոնը>> ջեռուցվում է օդորակիչների միջոցով էլեկտրական էներգիայով: Ուստի նպատակահարմար է հիմնադրամի կամ դոնոր կազմակերպության միջոցով էլեկտրաէներգիայի ֆոտովոլտային արևային համակարգի տեղադրումը, որը կապահովի էլեկտրական էներգիայի անընդհատ մատակարարումը , հիմնարկի ջեռուցումը, ինչպես նաև կառաջացնի ֆինանսական տնտեսումներ:

2. Մատուցվող բժշկական ծառայությունների և սպասարկման որակի բարձրացումը, սկրինինգային ծառայությունների, առողջ ապրելակերպի քարոզչության, հիվանդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքների, դիսպանսեր հիվանդների բուժումը և դինամիկ հսկողության ապահովումը; Հայաստանի մանուկների հիմնադրամի (COAF) հետ համագործակցության ընդլայնումը, որի շրջանակներում իրականացվում է խմբային առողջ ապրելակերպի խորհրդատվություն, շաքարային դիաբետով, զարկերակային հիպերտենզիայավ , բրոնխեալ ասթմայով հիվանդների կրթում՝ հիվանդությունների կառավարման նպատակով , կանանց մոտ՝ կրծքագեղձի և հարվահանաձև գեղձի, տղամարդկանց մոտ հարվահանաձև գեղձի և շականակագեղձի հիվանդությունների /չարորակ նորագոյացությունների/ վաղ հայտնաբերման

սկրինինգներ, 0-18տարեկան երեխաների աճի և զարգացման դինամիկ հսկողություն՝ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով:

3. Աշխատանքային պայմանների բարելավում՝ նոր գույքի ձեռք բերում:

<<Սառնաղբյուրի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ռ. Արշակյան

01/11/2019թ.